

Արմինե ԳՐԻԳՈՐՅԱՆ
Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարան

**ՀԱՄԲՆՎԱՆՈՒԹ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՍԻԱՎՈՐՆԵՐԻ
ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՏԱՐՔԵՐԱԿՆԵՐԸ ԵՎ
ԴՐԱՆՑ ՀՈԳԵՎՈՐ ԻՍԱԱՏՆԵՐԸ**

Սույն հոդվածի նպատակն է վեր համեն դարձվածքների, մասնավորապես՝ կազմախոսական դարձվածքների ծագման ու կազմավորման հնագոյն ակունքները՝ նախնադարյան առավելական շրջանից եկող մարդարանական ու պաճառեհստական պատկերացումները, հավատալիքները, ծեսերը, դրանք համեմատելուգաղբեկ աստվածաշնչյան-արքետիպային տարրերակների և կրոնածիսական համակարգի հետ:

Բանափառեր. հավատալիք, աստվածաշնչյան կազմախոսական դարձվածքներ, դարձվածային միավորներ, արքետիպեր, լեզվամշակոյթ, լեզվառունական հնարներ, զուգադրական թարգմանություն

Ծաս ժողովուրդների մոտ դեռ հարատևում է այն հավատալիքը, որ կենդանիները, մասնավորապես շները, տեսնում են ոգիներ, որի պատճառով էլ դրսենորում են որոշակի վարքագիծ: Թոշունները, ըստ գրենլանդացիների, վախենում են քահանող տեսիլքներից: Այսօրինակ պատկերացումները մեծ տեղ են զբաղեցնում ողջ աշխարհի ժողովուրդների հավատալիքներում: Օրինակ՝ Հոմերոսի «Ողիսական»-ում Տելեմարը չի տեսնում իր մոտ հայտնիած Արենաս Պալլաս աստվածուհուն, մինչդեռ նրան տեսնում են Ողիսար և շները: Դա բացատրվում է նրանով, որ աստվածները ոչ բոլոր մարդկանց են երևում տեսանելի ձևով: Այս նոյն պատկերացումները կան ոչ միայն տարբեր ժողովուրդների հնագոյն հավատալիքներում, այլ նաև Աստվածաշնչում, որտեղ բազմաթիվ դրվագներ կան, երբ Աստծո հրեշտակը կամ հրեշտակները հայտնվում են այս կամ այն մարդուն, մինչդեռ մյուսները այդ հայտնությանը չեն հաղորդակցվում կամ հաղորդակցվում են մասամբ: Բնորոշ օրինակներից կարող է լինել տեսիլքը՝ «Բարձրացրի աչքերս, և ահա փառահեղ հազնուած մի մարդ՝ մեջքին Ոփազի ոսկուց մի գոտի կապած. նրա մարմինը ծովագույն էր, նրա դեմքը փայլակի դեմք ուներ... միայն ես՝ Դանիելս տեսայ տեսիլքը... » /Դանիել, 10: 6-7/, Չաքարիայի տեսիլքը տաճարում՝ խնկարկության սեղանի մոտ՝ «Եվ տիրոջ հրեշտակը երևաց նրան՝ խնկերի սեղանի աջ կողմում կանգնած» /Ղուկ. 1: 11/, Սողոսի՝ ապագա Պողոս առաքյալի տեսիլքը Դամասկոսին մոտենալիս՝ «Եվ նա զնալիս, երբ մոտեցան Դամասկոսին, յանկարծակի նրա շուրջը երկնքից մի լույս փայլատակեց: Եվ երբ գետին ընկան, լսեց մի ձայն, որ իրեն ասում էր. «Սամո՞ղ, Սամո՞ղ, ինչու ես հալածում ինձ... »:

Ի՞նչ են ցույց տալիս կամ վկայում այսօրինակ տեսլիքները և այսօրինակ առանձնական, ընտրյալ հայտնությունները՝ տրված բացառիկ մարդկանց։ Դրանք ցույց են տալիս, որ բացի սովորական մարմնակազմից որոշ մարդիկ ունենում են նաև ոչ սովորական, «քացված» կամ սուրբ հայտնության արժանացած մարմնամասեր։ Այդ կարգի մարդկանց մարմնամասերը՝ աչքը (տեսողությունը), ականջը (լսողությունը), ձեռքը (գործունեությունը), ոտքերը (ընթացքը), սիրտը (բարոյական ու գաղափարական աշխարհը) և այլն, փոխսկած են կամ փոխսկերպված, այսինքն՝ նրանք ունեն արդեն իսկ նոր, հոգևոր աչք, ականջ, սիրտ և այլն, որոնք ի տարբերություն հին, աղանական մարմնամասերի, սուրբ են, նվիրագործված և որպես այդպիսիք, ծնունդ են տալիս բնույթով նոր՝ հոգևոր տիպի կազմախոսական ԴՄ-ների, որոնց բնութագրական բառային գուգորդումները կապված են հոգևոր բարձր իմաստների հետ՝ «նոր աչք», «նոր ականջ», «նոր սիրտ» և այլն։ Ցայտուն օրինակ է 50-րդ սաղմոսում հանդիպող կազմախոսական ԴՄ-ն՝ «Իմ մեջ մաքուր սիրտ հաստատիր, Աստուած» /Սահմ. 50: 12/, որտեղ առկա են դարձվածքի համար անհրաժեշտ հետևյալ գործունեները՝ կայունություն (կայուն է «մաքուր սիրտ» գուգորդումը), այլարերական իմաստ։ Իհարկե, ոչ բոլոր կայուն գուգորդումներն են, որ կարող են ունենալ ԴՄ-ի (դարձվածային միավորի) արժեք։ Օրինակ՝ «Ամեն անգամ ներս մտնելիս Արգամն ստիպված էր գլուխը կախել, որ ճակատը չխփի դռան վերին սեմին» նախադասության մեջ կայուն է «գլուխը կախել» գուգորդումը, որն այստեղ ունալ, ոչ այլարերական իմաստ ունի։ Մեկ այլ համատեքստում, սակայն, «գլուխը կախել» կապակցությունը կարող է ստանալ փոխարերական արժեք և հանդես գալ որպես սոմատիկ դարձվածք (օրինակ՝ «Իր վատ արարքի համար նա ստիպված էր գլուխը կախել»)։ Ընդ որում հարադրական կազմություն ունեցող նման դարձվածքները կարող են արտահայտվել նաև մեկ բարդ բառով, օրինակ՝ «գլխիկոր»։ Դիցուք, «Ես կարո՞ղ եմ արդյոք գլխիկոր չշրջել, եթե հիշում եմ իմ այն տգեղ արարքը...»։

- Ոճարաններն առանձնացնում են դարձվածքների մի քանի տեսակներ։
 1) դարձվածաբանական սերտաճումներ («աչքով տալ», «երես առած» և այլն), որոնք որշակի քերականական կարգերի կամ խոսքի մասերի պատկանող լեզվական միավորների բառերի անբաժանելի միավորումներ են,
 2) դարձվածաբանական միասնություն կազմող պատկերավոր արտահայտություններ, որոնք իրենց փոխարերական իմաստի շնորհիվ «օտարված» են իրենց անվանողական նշանակություն ունեցող լեզվական «նմանակներից», այդպիսիք են շատ իդիոմատիկ արտահայտություններ («գլխին տալ», «դուռը երեսին փակել», «արյունը բափել» և այլն), դրանք հատկանշական են նրանով, որ ունեն վերահմաստավորված և ընդհանրացված բովանդակություն /Եզեկյան, 2003: 182/, 3) դարձվածային կապակցություններ, որոնցից են՝ ինչպես վերը նշված «գլուխը կախել» արտահայտությունը, այնպես էլ «հոնքերը կիսել», «կանաչ ճանապարհ», «քիթը ջարդել» և նման արտահայտությունները /Եզեկյան, 2003: 183/, որոնք տեքստային ու համա-

տեքստային իրադրությունից կախված՝ կարող են ունենալ և՝ ուղղակի-անվանղական, և անուղղակի-այլարերական նշանակություններ՝ կատարել երկգործառույթ դեր:

Դեսք է ասել, որ տվյալ տեսակի դարձվածքները բազմաթիվ են ինչպես հայերենում և անգլերենում՝ առհասարակ, այնպես էլ Աստվածաշնչի հայերեն ու անգլերեն թարգմանություններում: Դարձվածքների մեջ մի հատուկ շերտ են կազմախոսական դարձվածքները՝ մարդու մարմնի մասերի (գլուխ, սիրտ, ձեռք, ոտք, աչք, քիթ, ականջ, մատ, թիկունք, երիկամներ, ատամ, բազուկ, ծունկ, ստիճան, մազ(եր), արտևանունքներ, լյարդ, աղիք(ներ), ճակատ և այլն) անվանումներով կազմված դարձվածքները: Ինչպես հատուկ է դարձվածքներին առհասարակ, այս կարգի կազմախոսական դարձվածքները ևս կայուն կառուցվածք և այլարանական նշանակություն ունեցող լեզվական միավորներ են, որոնց կազմավորման հիմքը բառերի ներումնակությունն է տարրեր նշանակություններով հանդիս գալու: Ֆ.Ա.Լիտվինը, խոսելով բառերի փոխարերական կիրառության մասին, նշում է, որ բառերի՝ տարրեր համատեքստերում տարրեր նշանակություններով հանդիս գալը պայմանավորված է ոչ միայն այդ համատեքստով, այլև բառերի լեզվական նշանակություններով կամ լեզվական ներումնակությամբ, որը և պայմանավորում է փոխարերականացման միջոցով դրսորվող բազմանշանակությունը /Լիտվին, 2005: 31/: Նման բազմանշանակ կիրառությունների պարագայում, Ն. Բ. Գվիշիանին գրում է՝ «հաճախ խոսքի մասի բառաքերականական նշանակությունների հարաբերակցությունը չի պահպանվում. բառի բերականական կարգային նշանակությունը հեռանում է նրա կոնկրետ բառական իմաստից՝ առաջ բերելով ձևաբանաշարահյուսական բազմագործառություն: Դա բառութիւն բառաբերականական այն ներումնակությունն է, որ բավարարում է մեկից ավելի խոսքիմաստային նշանակությունների»: Ն. Բ. Գվիշիանին, նման բազմագործառույթ բառերը քննելիս գնահատում է ինչպես նրանց ձևաբանաշարահյուսական, այնպես էլ բառադարձվածային հատկանիշները, նա նաև նշում է, որ բառերը լեզվական տարրեր կառույցներում իրականացնում են խոսքիմաստային տարրեր գործառույթներ, ինչպես, օրինակ, անգլերենի -ed և -ing մասնիկներով բառերը, որոնք ազատ կապակցություններում ունեն բայական, իսկ կայուն կապակցություններում՝ ածականական կիրառություն:

Բառերի նման բազմագործառությային կիրառումները և դարձվածային հատկանիշների ձեռքբերումը խիստ բնորոշ են Աստվածաշնչյան մտածողության՝ առհասարակ, և Աստվածաշնչյան կազմախոսական դարձվածքներին՝ մասնավորաբար: Վերջիններս հատկապես ուշագրավ են նրանով, որ իրենց մեջ ընդգրկում են վերը նշված՝ դարձվածային ասույթների հիմնական տեսակները՝ դարձվածաբանական սերտածումները, դարձվածաբանական միասնությունը և դարձվածային կապակցությունները:

Աստվածաշնչյան դարձվածքները, արքետիպային այլ ակունքներից (առասպելաբանությունից, կրոններից, պատմամշակութային անցյալից, արտալեզվական այլնայլ ոլորտներից) սերած դարձվածքների նման՝ ձևավորվել են

փոխարերությունների, փոխանունությունների և ոճական այլ հնարների միջոցով և ունեն գեղագիտական որոշակի արժեք:

Աստվածաշնչան և արքետիպային նշանակություն ունեցող այլ աղբյուրներից (տոհմացեղային հավատալիքներ, առասպելաբանություն, պատմալեզվամշակութային անցյալ և այլն) սերած տարալեզու շատ դարձվածքներ ընդհանրություններ ունեն միմյանց հետ: Նման ընդհանրությունները, որ արդյունք են դեռևս լրիվ չքացահայտված մի շարք գործոնների, առկա են ոչ միայն լեզվականորեն միմյանց մերձավոր, այլև միմյանցից հեռու համարվող լեզուների դարձվածքների միջև:

Անգլերենում և հայերենում «կրկնվող» կամ «հոմանիշ» ԴՄ-ների դիտարկումները թույլ են տալիս ճանաչել ոչ միայն առկա ընդհանրությունները, այլև լեզվամշակութային տեղայնացման արդյունք հանդիսացող որոշակի տարրերությունները. Վերջիններս էլ իրենց հերթին թույլ են տալիս խոսել տվյալ արքետիպային ԴՄ-ների ձեռքբերած առնչանակությունների և փոխակերպումների մի քանի աստիճանների մասին: Այս առումով ուշագրավ են, օրինակ, հայերեն-անգլերեն որոշ գուգադրությունները, այնպիսիք, որոնք ունեն, այսպես ասած, դարձվածային նույն կենտրոնը, որը կարող է լինել, դիցուք, սիրտը, լեզուն, աչքը և այլն: Բերենք որոշ օրինակներ.

«Աչքերը ճակատը թռան» – Smb's eyes nearly popped out of his head. –
Глаза на лоб лезут;

«Աչքերը բացվեցին» – Smb had his eyes opened; smth made smb open his eyes. – Глаза открылись;

«Ուր աչքը կտրի» («ուր աչքը նայի») – Every which way but loose. – Куда глаза глядят;

«Սեփական աչքով տեսնել» – To see smth with one's own eyes; to see smth for oneself. – Видеть своими глазами.

Իհարկե, այս փորբարիվ օրինակներով չեն վերջանում «աչքով» կազմված ԴՄ-ները. դրանք բազմաթիվ են՝ «աչքից ընկնել», «աչքով տալ», «աչքկապուկ», «աչքալույ», «աչքի ցանկություն» և այլն. դրանք ունեն նաև իրենց այլալեզու տարրերակները: Վերը նշված օրինակներն այստեղ ընտրվեցին 1) որպես ընդհանրություն, ինչպես նաև որոշակի տարրերությունների նմուշներ, 2) նաև որպես արքետիպային իրենց նախօրինակները ունեցող ԴՄ-ներ՝ որպասիք են, օրինակ, «Աչքերը խավարել» կամ «Աչքերը բացվեցին» դարձվածքները: Սա ամենին էլ չի նշանակում, որ մյուսները չունեն իրենց արքետիպային՝ սկզբնատիպային ձևերը. անշուշտ, ունեն, բայց նշանակում առավել ցայտուն են և անշփորելի, իբրև աստվածաշնչան հայտնի սկզբնատիպայի վրա հիմնված ԴՄ-ներ: Այսպես, Աստվածաշնչում նշվում է.

«Բայց եթե քո աչքը վաստ է՝ քո ամբողջ մարմինը խավար կիմի. ուրեմն, եթե քո մեջ եղած լույսը խավար է, խավարն, ուրեմն, որչափ ևս... »: /Մատթ. 6: 23/ – “... but if your eye is not sound, your whole body will be full of darkness. If then the light in you is darkness, how great is the darkness!” /Matt.6: 23/

Հաջորդ՝ քննարկվող մարմնամասը մարդու գլուխն է, որով կազմված ԴՄ-ները շատ են: Դրանք սերում են իին հավատալիքներից, Աստվածաշնչից, առասպելաբանական-բանահյուսական սյուժեներից. դրանցում գլուխը համարվում է առաջնային, առաջնորդող, ամենայն ինչից բարձր՝ արժանի պատվի և երկրպագության: Ուշագրավ ընդհանրություններ են հայտնաբերվում «գլուխ» հասկացույթով տարալեզու ԴՄ-ների միջև, թեև առկա են նաև որոշակի տարբերություններ: Հարկ է նշել, որ այդ տարբերությունները հաճախ միևնույն լեզվանական արքետիպը այլևայլ կողմերից բացահայտող տարալեզու դրսերումներ են. մոտավորապես այն, ինչ բարգմանությունների համար ասել է Ա. Վ. Ֆյոդորովը. «Թարգմանությունները կարող են լուսավորել բնագրի տարբեր հայեցակերպերը՝ որպես անհրաժեշտ նյութ ծառայելով բնագրի առավել լրիվ, առավել կատարյալ բացահայտման համար» /Ֆեդորով, 1971: 303/: Ահա, այդ նույն դերակատարումը կարող են ստանձնել սույն եռալեզու ԴՄ-ները՝ տարբեր երանգավորումներով և մասնավորեցումներով՝ առավել ամբողջական դարձնելով նշյալ դարձվածքները, այս դեպքում՝ կապված «գլխի» հետ:

«Գլուխ առաջին գլխում...» – First and foremost – В первую голову книги.

«Գլուխը պտտվում էր» («գլխապտույտ») – Smb's head goes round (spins); smth makes smb's head go round (spin); smth makes smb dizzy (giddy). – Голова шла кругом.

«Գլուխ ունի ուսերի վրա» – Smb has a (good) head on his shoulders. – Иметь головы на плечах.

«Երևում է՝ գլխովն է» («Գլուխ ունի») – A person with a (good) head on his shoulders; a bright chap (girl). – Человек с головой.

Չատ են նաև ընդհանուր ԴՄ-ները՝ կապված սնահավատության դրսերումների հետ.

«Սիայն իմ դիակի վրայով» – Over my dead body. – Только через мой труп.

«Նույն ոզով» – In the same spirit. – В том же духе.

«Ժերև ձեռք...» – Smb easily gains success in any undertaking and brings good luck to his partners. – Легкая рука.

«Ձեռքերը քոր են զալիս» – Smb's fingers itch to do smth, smb has an itch. – Руки чесутся.

«Հինգ մատի պես» – To know smth, smb like the back of one's hand. – Как свои пять пальцев.

«Փրփուրը բերանին – Passionately, heatably, vehemently. – С пеной у рта, «Սիրտը արյուն լցվել», «Սրտից արյուն է գնում» – Smth makes smb's heart bleed; smb's heart bleeds for smb. – Сердце кровью обливается;

«Ականջը կանչել» – It makes smb sick to hear smth. – Уши вянут;

«Կարմրել մինչև ականջների ծայրը» – To blush all over one's face – Краснеть до самых ушей.

Անշուշտ, հնարավոր չէ ասել, թե հատկապես ե՞րբ և ո՞ր լեզվամշակոյթում, կյանքային ի նշ իրավիճակում է առաջացել, ասենք, «Հինգ մատի պես... » ԴՄ-ն ու տարածվել այլուրեք, բայց հնարավոր է, արձանագրել, որ «Երեսով», «Փրփուրը բերանին տվեց»-ով «ի սրտե արյուն լացել»-ով, «Կարմրել»-ով ԴՄ -ները հաստատապես ունեն իրենց աստվածաշնչյան արքետիպային ձևերը, որոնք տարածվել ամրակայվել ու շրջանառու են դարձել տարբեր լեզվամշակույթներում՝ դառնալով այդ լեզուների բառապաշտի և գեղարվեստական բառ ու բանի անքակտելի մասը:

Բերված զուգադրական օրինակներում կան այնպիսիք, որ կարող էին ստեղծված լինել թե՝ վաղնջական ժամանակներում (որպես մարդու տարրեր մարմնամասերին վերագրված հավատալիքներ) թե՝ համակարգված կրոնների տարածման ժամանակաշրջանում, թե՝ ժողովուրդների պատմամշակութային զարգացումների ընթացքում: «Միայն իմ դիակի վրայով» ԴՄ-ն, օրինակ, կարող էր ստեղծված լինել առասպելական հերոսների, իսկ «Չեռքերը քոր են զայխ» արտահայտությունը՝ հնագույն հավատալիքների տիրապետության շրջաններում: Բոլոր դեպքերում վերջին տիպի՝ սնահավատության արյունք հանդիսացող ԴՄ-ները բացակայում են Սուրբ գրքում. եթե ինչ որ արձանագրումներ էլ կան, ապա դրանք կրում են խիստ ժիսողական, մերժողական բնույթ և զատագովում են զորավոր և ողորմած Աստծո պաշտամունքը՝ Սուրբ Հոգով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Եղեկյան Լ. Կ. Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, ԵՊՀ, 2003:
2. Литвин Ф. А. Многозначность слова в языке и речи, изд. 2. М.: Комкнига, 2005.
3. Федоров А. В. Основы общей теории перевода. М.: Высшая школа, 1983.

А. ГРИГОРЯН – *Лингвокультурные, переводческие варианты универсальных фразеологических единиц и их духовные значения.* – Статья посвящена рассмотрению связей между ранними верованиями и Библией, в результате чего возникли многочисленные архетипные фразеологические единицы. Библейские фразеологические единицы, как и другие фразеологические единицы, образованные из других источников (мифология, религия, историко-культурное прошлое), имеют в основе метафору, метонимию, а также другие стилистические средства и обладают определенной художественной значимостью. Сопоставительный анализ перевода английских, русских и армянских вариантов выявляет как сходства, так и различия.

Ключевые слова: верование, библейские соматические фразы, фразеологические единицы, прототип, лингвокультура, лингвостилическое средство, сопоставительный перевод

A. GRIGORYAN – *Linguocultural, Translational Options of Universal Phraseological Units and their Spiritual Meanings.* – In the paper the ties between the earliest beliefs and the Bible, which gave birth to numerous archetypal phraseological units, are discussed. They deal with the anthropological factor, that is, the great background which was preserved in various ethnic communities and passed from generation to generation as a special way of linguistic mentality. The Biblical phraseological units like other phraseological units derived from other sources (mythology, religion, historical-cultural past) were formed by means of metaphors, metonymies and other stylistic means and have a certain literary value. The contrastive analysis of translations (English, Russian and Armenian) reveals similarities as well as differences.

Key words: belief, biblical somatic phrases, phraseological units, archetype, biblical lingvoculture, linguostylistic means, contrastive translation